ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՄԱՐՏԻ 2021թվականի N 049

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը *որոշում է.*

1. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 2.23578հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0432-, 0.899հա-ի գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի վարելահող, 1.33678հա-ի գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության,

2. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.50435 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0430-, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

3. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.35473 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0430-, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

4. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 2.23578հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0432-, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ պետական սեփականություն:

5. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.50435 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0430-, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ պետական սեփականություն:

6. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.35473 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0430-, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ պետական սեփականություն:

(որոշման 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերը շարադրվել են նոր խմբագրությամբ Արենի համայնքի ղեկավարի 07.04.2021 թվականի թիվ 086 որոշմամբ)

(որոշման 1-ին և 4-րդ մասերը խմբագրվել են համաձայն Արենի համայնքի ղեկավարի 21.04.2021 թվականի թիվ 106 որոշման)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**